

գունեցեալ տիրացու Կիրակոսին որդի տիրացու Նիկողոսին որդի տիրացու Տոնապետին ձեռամբն գրվեցաւ Հայոց թվին ՌՅԻԷ (1878) . եւ որ հան(դիպիք) մէկ (կրկնուած) հայր մեղայ մի ասէ . ամէն : Ծառայ Տեառն տիրացու Տոնապետին :

Այլ գրով . Ստեփան Յովհաննէան ,  
Ստեփան Արծիւեան :

Հ. Ն. ԱԿՒՆԵԱՆ



### ՆՄՈՅՅՆԵՐ ՍԵՐԱՍԻՈՅ ԺՈՂՈՎՐԳՎԱԿՆ ԲԱՆԱՀՅԻՍՈՒԹԵՆԷՆ

Հետեւեալ կտորները հաւաքած էի Սեբաստիոյ հայ ժողովրդական բանահիւսութենէն , երբ դեռ ուսանող էի նոյն քաղաքի Վարժարանին մէջ : Կը ցաւիմ , որ անկարող եղայ լրակատար հաւաքածոյ մը կազմելու : Իբրեւ յիշատակ Սեբաստիոյ պատմական եւ պատուական Հայութեան կը ներկայացնեմ այս տեղ փնջիկս , գէթ այսքանը կորուստէ փրկելու համար :

1. Հայ մամիկը իւր թոռնիկներուն կը սորվեցնէ աղօթքս .

Մարիամ մար ,  
Աստուածամար ,  
Ք՞ուն ես թէ արթուն .  
— Ոչ քուն , ոչ արթուն :  
Անմահութեան ջուր կը բխայ ,  
Սարկաւազաց ձայնը կու գայ :  
Ով որ այս ջուրէն խմէ ,  
Հայրն ու Որդին խոստովանէ  
Հուրն ինի չ'էրի ,  
Ջուրն ինի չի խղզի ,  
Դժոխոցը դռնէն չանցնի :  
Ով որ այս աղօթքը լսէ  
Աստուած անոր մեղքը չիչէ :

2. Երբ հաւատացեալը օրուան աշխատանքէն յոգնաբեռն ճրագը կը մարէ եւ աչքերը կը գոցէ , քնանալէ յառաջ հետեւեալ մաղթանքը կ'ընէ .

Ահա մտայ հողվարդ ,  
Հոգիս քեզի ամանաթ ,  
Սուրբ պահապան հրեշտակ :

Ադն ու խաչը բարձիս վրայ ,  
Սուրբ Աւետարանը բերնիս վրայ ,  
Ընտոր մըտայ աւազան ,  
Անանկ մտնեմ գերեզման :

3. Տան դուռը դոցած ատեն հետեւեալ մաղթանքը կ'ըսեն .

Երեք երեք աւելցին ,  
Երեք խաչեր կազմեցին .  
Աս տունն էրէր անի ,  
Տաճարն Սողոմոնի :  
Հայրն ախլէ , Որդին փակէ ,  
Քրիստոս Աստուած չար խափնէ :  
Դուռն էկողը քար կ'ըլլի ,  
Էրզիքն էկողը երկաթ կ'ըլլի :

4. Երբ մանուկը խոստով ունենայ , մայրը հետեւեալ մաղթանքը կը կրկնէ .

Քրիստոս մեր տունը հուր է ,  
Օթեւանը մսուր է ,  
Մնքարը բարձր է ,  
Կերթէ տէօշէկ ,  
Գարէ հացիկ ,  
Խոս պնակիկ ,  
Կուճուկ գթալիկ :  
Հօրը աղեկութիւնը ,  
Մօրը գէշութիւնը ,  
Այլ չի բռնէ  
Այս մանկան խոստովը :

5. Եթէ գիշերը քունը չգայ ու չար խորհուրդներ տանջեն մարդը , հետեւեալը պէտք է աղօթել .

Կրակը մարեցաւ ,  
Չարը խափանեցաւ ,  
Չար սատանան հալածեցաւ :  
Պօղէս Պէօյէս յերթիք ելան ,  
Հաճի Յակոբ դուռը ելան :  
Անդ(ի)էն երեք ձիաւոր եկան .  
Երեքն ալ խատապուէր էին :  
Կէս գիշերը դուրս ելայ ,  
Մէկ գօրաւոր սուրբ տեսայ .  
Ինտոր տեսայ սարսափեցայ ,  
Ըսի . Տէր , քու անունդ ի՞նչ է :  
— Իմ անունս սուրբ Մարգիս է :  
Սուրբ Մարգիս , սուրբ Օհան ,  
Սուրբ Նշան , էրկէր Օհան ,  
Երեք մէկ դուռ բաց իջան ,  
Հաց կերան , գոհացան ,  
Բաժակ խմեցին ուրախացան :  
Յեան առաջքին ժամ կայնեցան ,

Քու ժողովուրդ , Տէր , միաբան ,  
Քեզ օրհնեցին հազար բերան :  
Լուս ի լուսին ,  
Կուս ի կուսին ,  
Լուսն է վառ ,  
Վառ առջեւնին ,  
Աստուայ բանն է բերնին ,  
Աստուայ գիրն է ճակատին :  
Ելաւ գնաց սուրբ Տաճարին ,  
Խոնկը գօտին ,  
Մէմը ձեռքին :

6. Սուրբ Կարապետի գովքը<sup>1</sup> .

Սուրբ Կարապետ խորան խորան ,  
Մէջն ալ իլլիք Աւետարան .  
Եկէք կարգանք մէջմէկ բերան ,  
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ եմ գնացեր ,  
Պասկէր օրան եմ քնացեր :  
Մուրատոս առեր չեմ իմացեր .  
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ կանանչ փառչեր ,  
Ոտքերուդ կու գան ճահիլ մանչեր .  
Մատաղ ըրէք սեւ սեւ դոչեր  
Մուրատատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ բերին կայնեցուցին ,  
Ոսկի շուրջառն ալ հազցուցին .  
Քրիստոս Տէրը գերկը մկրտեցին .  
Մկրտատուր սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ կանանչ դաշտեր ,  
Մէջն ալ իլլիք խաչապաշտներ .  
Քրիստոս Տէրը մեր հետ հաշտ էր .  
Եկէք երթանք սուրբ Կարապետ :

Սուրբ Կարապետ բարձր տեղ է ,  
Բոլոր իլլիք ծառ ու տեղ է  
Ամէն պտուղ տէրտի գեղ է  
Տէրտի տէրման սուրբ Կարապետ :

7. Որչափ մօտիկ եւ մտերմիկ կը գգայ հաւատացեալը երկնային հակներու հետ , յայտնապէս կ'երեւի հետեւեալ տողերուն մէջ :

Յիսուս Որդին հարիկս ,  
Աստուածածին մարիկս .  
Բարի հրեշտակը աղբարիքս ,  
Սուրբ կուսանք զբրվարիքս :

<sup>1</sup> Սուրբ Կարապետ Սեբաստիոյ վանքերէն մէկէն էր :

Ահա մտայ գերեզման ,  
Հոգիս քեզի պահ կու տամ .  
Մինչեւ առաւօտեան :

Աստուածամար ,  
Լուսնակամար :  
Հոգիս տամ քեզի համար ,  
Իս մի տանիք մութն ու խաւար .  
Մէկիկ որդուդ հոգուն համար ,  
Արքայութեան դուռը ցըցուր .  
Դժոխքի դռնէն անցուր ,  
Իմ չար մեղքը ինծի ճանչցուր ,  
Բարի միտքդ ինծի գիտցուր :

Եկէք էրթանք Եկեղեցի  
Եւ ծունկ չօքինք սուրբ Տաճարի .  
Աղաչանք ընենք մեզի համար :  
Եռմար եռմար եւ Մարիամ մար ,  
Ոչ քուն եմ եւ ոչ արթուն եմ :  
Երազ տեսայ գարհուրեցայ ,  
Կը վախեմ որ քեզի բսեմ .  
Մի' վախեր , Մարիամ մար , մի' վախեր :  
Մեր Տէրն եկաւ Երթմ քաղաք ,  
Այս փէշեր փոեցին ,  
Երեսին փոշին սրբեցին ,  
Տաք թասը գլուխն անցուցին ,  
Աղու գեղը բերանն ի վար լիցուցին :  
Խաղ ու կոպիտ թուք երեսին :  
Մատները դամիչ խաղցուցին :  
Մարիամ մար , որդիդ ես թաղեր .  
Մի' սեր մարիկ , մի' սեր .  
— Հացէնիդ գեղէն ըլլայ ,  
Ձրէնիդ ըմպուն ըլլայ :  
Երկինք գիտենք խափանեցաւ ,  
Երկնից աստղերը թափեցան .  
Լոյսն լոյս սուրացաւ ,  
Լոյս գերեզմանը բացուեցաւ :  
Աղամ Եւան ուրախացաւ  
Սատանաներն օխտը դաթն անցաւ .  
Ով որ յիչէ այս աղօթքը  
Աստուած անոր չիչէ մեղքը :

Տէր , ողորմեա , Տէր , քեզ մեղայ .  
Վայ ան աւուր որ ես եղայ :  
Հէլալ հէրամ չըսի կերայ :  
Յերկան ճամբան իմ գնալու ,  
Փոշոտ ոտովս իմ կոխելու :  
Չունիմ պաշար հետ տանելու .  
Քրիստոսուս ջուրապ տալու :

Անդէնք մազէ կամուրճ է .  
Արդարը թուաւ անցաւ  
Մեղաւորը հուրն էրեցաւ :

Աստուածածնայ գովքը:

Մարիամ մար, քնքուչ ես .  
Քննց արեգակը արդար ես,  
Քննց լուսնկան պայծառ ես:  
Ոսկի պտուղ բերան ես:  
Աստուածածին մեղայ քեզ:  
Քրիստոս Տէրը հուր էր,  
Տեղը կովու մտեր էր:  
Թթու թանկի,  
Կուճուկ գթալիկ  
Էրած հացիկ,  
Քրիստոս Տերոջ հրամանքով:

Մանուկի մը հիւանդութիւնը երկնային  
մարմիններու ազդեցութեան վերադրելը միայն  
Հայոց մէջ նախապաշարուած մը չէ եղած:  
Շէջքսիւր իր թատերգութեանց մէջ յաճախ  
կը յիշէ չար աստղերու ազդեցութիւնը: Այս  
չար աստղը վանելու համար Հայ մայրը կը  
կրկնէ:

Մանուէլ, Սամուէլ Ազամէն:  
Աստուածածնայ քաղցր կաթովը,  
Չար աստղ, քեզ կապեցի, կապեցի:  
(Կրկնէ երեք անգամ խաչակնքելով):

Լուսինկա,  
Ոսկի ինկայ:  
Բետիկ ի վար ոտքիդ ինկայ:  
Ծեր գնացիր, մանուկ եկար:  
Վարձըս բեր, մեղքս տար:  
Հայր, մեղայ,  
Հողիդ ու ջրիդ:  
Հայր, մեղայ,  
Ծառիդ ու ճղիդ:  
Հայր, մեղայ,  
Ստեղծուած ծառայիդ:

Տղայոց մաղթանքը Արեւին:

Արիւ, եկուր, շուք, գնա .  
Տէրտէր պապան տուն կու գայ:  
Լէլէլու բապուճ տամ,  
Սունկ տամ, մէօմ տամ,  
Տէստի մը ջուր տամ:  
Լողցեր լողցեր տուն եկուր,  
Իրացներուն բարեւ տուր .  
Ինձ ալ արեւ տուր:

8. Երբ մայրը լողանք կու տայ իր պզտիկին,  
ոչ միայն անոր մարմինին մաքրութեանը  
հոգ կը կր տանի, այլ նաեւ զայն տեսակ

մը մարմնակրթանքի կ'ենթարկէ պատշաճա-  
ւոր եւ ոչ ցաւցնող շարժումներով, մինչդեռ  
կը կրկնէ .

Ղուլած զուլած թեւեր ըլլա (թեւերը կը  
չարժէ) .  
Ծով ծով աչեր ըլլա (աչքերը կը չիէ) .  
Բայլա քթիկ ըլլա (քիթը կը բռնէ) .  
Ղութի բերան ըլլա (բերանը կը սխմառկէ) .  
Հըմմէ հրամմէ ըսես (քաղաքավար ըլլաս) .  
Էրկան վզիկ ըլլա (զլուխը բռնած մար-  
մինը կը կախէ) .

Կովերդ կըթվան ըլլա:  
Հաւերդ անան ըլլա:  
Տալարդ սիրիւ ըլլա:

9. Մայրական գովեստ .

Աչուկն է՝ աչուկը (ցոյց կու տայ ամէն  
անգամ) .

Կըլմանի ժամուն խաչուկը .  
Կտիկն է՝ կտիկը (ծնօտ)  
Կըլմանի ժամուն կօթիկը .  
Կոնակն՝ է կոնակը,  
Կըլմանի ժամուն դոնակը .  
Բերանն է՝ բերանը,  
Կըլմանի ժամուն խորանը:

10. Քներգ .

Թոմպուլ թոմպուլ պըտըտիկ,  
Իմ գանուկս մէկ հատիկ:  
Վաղը քնէն արթըննայ,  
Շարժէ թեւերն ու տոտիկ:  
Աս ինչ աղուոր հայրիկ է,  
Մանչը ինձի կը ձգէ:  
Սփէ աչուիդ անուշիկ .  
Տոնտուրդ ձագիկ հերիք է:

11. Զբօսանքի երգ .

Ծափիկ ծափիկ ծիրանի,  
Կարմիր խնձոր վանեցի:  
Աղջիկներուն ճուղակցի .  
Մէկ աղջիկն ինչ չմնաց:  
Գլխի վայր գետը գնաց:  
Աղջիկ, դարձիր, տուն եկուր,  
Քու փայտ գօտիս մնաց:

12. Հայ մամիկը տաքուկ թոնիրին շուրջ  
իր թոնիրիկին կը սորվեցնէ անունները մատ-  
ններուն:

Ձեռքն իբր ընտանիք:

Հայրը բութամատ,  
Ոչխար մը գնեց .  
Մայրը ցուցամատ,  
Ջատիկին մորթեց .  
Տղան միջնամատ,  
Մորթեց ու քերթեց .  
Քուրը մատնեմատ,  
Տափիկեց ու եփեց .  
Փոքրիկ ճկոյթն ալ  
Նէմ նէմ ծամեց:

Ձեռքը իբր լուսային տեսարան:

Բութամատը կ'ըսէ .  
— Գալ կու գայ:  
Յուցամատը կ'ըսէ .  
— Ուսկի՞ց կու գայ:  
Միջնամատը կ'ըսէ .  
— Լեռնէն կու գայ:  
Մատնեմատը կ'ըսէ .  
— Ատանկ է նէ ես կը փախիմ:  
Ճկոյթը կ'ըսէ .  
— Ես ալ կուճուկ իմ,  
Քու վրայ կ'ելլեմ կը փախիմ:

13. Էջը ամենաօգտակար կենդանիներէն  
մէկն է Արեւելքի մէջ: Բայց լաւատես հայուն  
համար մինչեւ իսկ իր սատկած էջը . փոխա-  
նակ ողբի, օգակարութեան, թէեւ երեւա-  
կայական, կարգ մը խորհրդածութեանց դուռ  
կը բանայ: Լսենք այս դիւցապներգութիւնը .

Ազուէր եղաւ,  
Էջս մեռաւ:  
Կաշին աղուէր  
Կարպետ կ'ըլլայ .  
Աչքը աղուէր  
Հէյլի կ'ըլլայ .  
Բերանն աղուէր  
Ջաղացք կ'ըլլայ .  
Ճըռուին աղուէր  
Պասթօն կ'ըլլայ .  
Աղիքն աղուէր  
Աւել կ'ըլլայ .  
Ձեռքը աղուէր  
Մաշա կ'ըլլայ .  
Քիթը աղուէր  
Չուռնա կ'ըլլայ .  
Անկաճն աղուէր  
Դգալ կ'ըլլայ .  
Գլուխն աղուէր  
Թոխմախ կ'ըլլայ:

14. Չաւեշտ .

Ալոճէնի,  
Կուճէնի .  
Ուէվ օր թըծծէ  
Թին յելլէ .  
Թիպոչուն  
Վերն ելլէ:  
Ամպուխ չըպուխ,  
Քիթիլ բամբակ,  
Հոս մոս,  
Տիւմպէլէկ .  
Թը՛ս:

15. Հանելուկ .

Երկու սուն (ոտքերը) .  
Սունին վրայ տուն (երան) .  
Տունին վրայ պօռու (վիղ) .  
Պօռուն վրայ ջաղացք (բերան) .  
Ջաղացքին վրայ աղբուր (քիթ) .  
Աղբուրին վրայ հէյլի (աչքերը) .  
Հէյլիին վրայ պայիբ (ճակատ) .  
Պայիբին վրայ շայիբ (մաղ) .  
Չայիբին վրայ տավար (ոջլուտ գլուխ):

16. Բարի եւ աշխատասէր Հայ տան-  
տիկինը իր բարեպաշտութեան եւ իմացական  
կարողութեան ապացոյցը կու տայ երբ ան իր  
լեզուով եւ իր հասկցողութեամբ կ'երգէ  
իր զանազան գործառնութիւնները . այսպէս  
խմոր թխած ատեն ո՛վ չէ լսած այն մաղ-  
թանքը որ իր աշխատանքը կը պսակէ հե-  
տեւեալ յատկանշանական բառերով մինչ  
խմորը կը խաչակնքէ .

Խմոր, խմոր, հրեշտակ,  
Ես մեղաւոր մարդու վաստակ .  
Դուն արդար եղան վաստակ:  
Մեղաւոր էի  
Քեզ տաժնեցի .  
Մեղայ քեզ խմոր,  
Ես ժամ կ'երթամ,  
Դու ետեւէս  
Թէ՛զ կու դաս:

Քառեակ անյիշաչարութեան:

Չարիս խորաթողին,  
Բաղնիքն էրթամ .  
Բարիս խորաթողին,  
Հաշնիքն էրթամ:

Չարիս խորաթողին,  
Բարի տաս.  
Բարիս խորաթողին,  
Արքայութիւն տաս:

Մաղթանք պաշտպանութեան:

Թաժա հացի Փէղ (հոտ) կու գայ,  
Ելէք նէյէցէք ո՞վ կու գայ:  
Երեք ձիւտոր մարդ կու գայ  
Պողոս, Պետրոս, սուրբ Ստեփանոս.  
Փիլոննիդ յերթիցս ծածկոց ըլլա,  
Գաւազաննիդ դռանս գոց ըլլա.  
Դուռս եկողը քար կըլայ,  
Էրթիքս եկողը երկաթ կըլայ:

Ձեռքը կեռացած ատեն:  
Մաղիս հատովը  
Ճանկս լեցընես:

17. Փոքրիկ տղայք երբ բարտի ճիւղին  
կեղեւը կը հանեն սուլիչ ընելու համար՝ հե-  
տեւեալ քառեակը կը կրկնեն, մինչդեռ զայն  
կը թուցնեն կամաց մը ծեծելով:

Պօռու պօռու պոռեստան,  
Մատդ դնեմ մատնեստան:  
Ի՞մ չես, քուկ չես,  
Քօր սատանայի՛ն ես:

Համայնք Յ. Գ. ՄՈՍԿՈՅԵԱՆ



**ԹԻՓԼԻՍԻ ՀՆՅՎԱԿԱՆ ՊԵՆԹՆՆԵՐՈՒՄ**

**1. ԽՕՁԻՎԱՆՔԻ ԳԵՐԵՁՄԱՆԱՏԱՆԸ**

Տեսե՛լ էք Խօջիվանքը:

Բարձրացէք Թիֆլիսի Հաւարարը եւ  
Ռօզալահայի հրապարակով մտէք Խօջիվանքի  
փողոցը: Ահա այդտեղ է պատմական մեծ  
պանթէոնը:

Հազարաւոր կրանիտէ տապանաքարեր,  
մարմարէ արձաններ եւ կոթողներ՝ տարբեր  
երանգներով ու ստիւներով կերտուած, եր-  
կաթէ գեղեցիկ վանդակապատներով ու ծա-  
ռերով զարդարուած, գրաւում են ձեր ուշա-  
դրութիւնը եւ համակում ձեզ ծանր ու խոր  
թախիծով...:

Հազարաւոր կարճ, բայց յուզիչ արձա-  
նագրութիւններ, թախիծոտ բանաստեղծու-

թիւններ ու քառեակներ, անպաճոյճ յիշա-  
տակագրեր եւ համը թուականներ խօսում են  
ձեր սրտի, ձեր դիպացումներէ հետ, յուզում,  
ալեկոծում ձեր հոգեկան աշխարհը: Ամէն  
մի շիրիմ, ամէն մի կոթող, ամէն մի ար-  
ձան ունի իր յուզիչ պատմութիւնը, իր դրա-  
ման, իր ողբերգութիւնը:

Ո՛րքան պայծառ, լուսաւոր դէմքեր  
նկատուում են ձեր աչքերի առաջ, ո՛րքան  
ազիզ սրտեր պատկերանում:

Այդ պանթէոնում են հանդէսում հայ դրա-  
կանութեան, արուեստի, կուլտուրական յե-  
ղափոխութեան, քաղաքական վերածնութեան  
բազմաթիւ մշակները—խմբագիրները, հրա-  
պարակախօսներ, պօէտներ, երաժիշտներ,  
նկարիչներ, քանդակագործներ, ճարտարա-  
պետներ, դերասաններ, վիպագիրներ, պատ-  
մաբաններ, որոնք կերտել են տարբեր դարա-  
շրջանների պատմութիւնը, արձարծել նոր  
գաղափարներ, ծածանել նոր դրօշներ եւ  
հարթել են նոր ուղիներ: Պայքարել են նրանք  
ժամանակի կուլտուրական յետամնացու-  
թեան, կենցաղային անտարապաշտութիւն-  
ների, ճնշումների դէմ եւ ժողովրդի տար-  
բեր խաւերին առաջնորդել դէպի լուսաւորու-  
թիւն, դէպի կուլտուրա եւ գիտութիւն: Այդ  
վեհ իրէջանների իրազորման համար պայ-  
քարել են նրանք վճռական կամքով, ան-  
վկանդ տոկունութեամբ եւ նուաճելով բազ-  
մաթիւ խոչընդոտներ, քայլել են յաղթանա-  
կից յաղթանակ: Նրանցից շատերն ընկել են  
պայքարի հէնց կէս ճանապարհին, շատերը՝  
բարձունքների վրայ...:

Այսօր չկան այդ լուսաւոր, պայծառ  
դէմքերը. նրանք յաւիտեան բաժանուել են  
մեզնից, թողնելով միայն իրենց գործերն ու  
չիրիմները: Նրանց յիշատակի ամենավերջին  
կոթողներն են այդ շիրիմները, որոնց վրայ  
քանդակած են նրանցից շատերի վերջին  
կտակները, վերջին խօսքերը...:

Կանգ եմ առնում իւրաքանչիւր տապա-  
նաքարի, իւրաքանչիւր արձանի առաջ եւ  
կարդում մէկը միւսից աւելի յուզիչ, մէկը  
միւսից աւելի թախիծոտ արձանագրութիւն-  
ները, որոնք պատմում են ամէն մէկի կեանքը,  
զժազրում ամէն մէկի պատկերը:

Բայց միայն Խօջիվանքը: Անցէ՛ք Վե-  
րայի գերեզմանատունը, շրջէ՛ք Վանքի մայր-  
եկեղեցին, մտէ՛ք Ս. Գէորգի եւ Կուկիայի  
գերեզմանատները: Քանի՛ քանի՛ վշտաբեկ,  
թախիծոտ թափօրներ համախմբուել են այդ

պանթէոններում եւ հողին յանձնել անման,  
ազիզ սրտեր, թախիտէն տաղանդներ:

Մի խոր եւ ծանր թախիծ յուզում, թախ-  
ծում է սիրոս: Նրանցից շատերը հանդէսում  
են հողի մէջ առանց յուշարձանների, առանց  
տապանաքարերի: Շատերի գերեզմանների  
թումբերը հարթուել, հաւասարուել են հո-  
ղին եւ անհետ կորել: Ո՞վ կարող է ցոյց տալ  
գերասաններ Միհրդատ Ամերիկեանի, Թու-  
րեանի շիրիմները, ո՞վ կարող է մատնանշել  
նկարիչ Ներսիսեանի հողաթումբը. թերեւս  
փորել են նրանց գերեզմանները եւ նորերը  
թաղել: Ո՞վ գիտէ գայ մի օր, որ անյայտա-  
նան դեռ շատ թանկագին շիրիմներ եւ արձա-  
նագրութիւններ: Անհրաժեշտ է փրկել ժա-  
մանակի կլանող ժանիքներից: Ահա այդ գի-  
տակցութեամբ ամէն մի յիշատակագիր, ա-  
մէն մի թուական պոկելով արձանների, տա-  
պանաքարերի եւ կոթողների վրայից, յանձ-  
նում ենք դրականութեան պատմութեանը:

**ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ**  
(1845—1892)

Միայն երկու անուն — Գրիգոր Արծրունի  
եւ «Մշակ»: 70—80ական թուականների հայ  
հրապարակախօսութիւնը եւ գրական — կուլ-  
տուրական կեանքը մեծ մասամբ կապուած  
են այդ երկու անունների հետ:

«Մշակ» եւ Արծրունի — դար անողք,  
վճռական եւ համարձակ մի պատերազմ է  
պատմաշրջանի խաւարի, անշարժութեան,  
թմրութեան եւ անկուլտուրականութեան  
դէմ, մարտական մի պայքար է հիմ սերնդի  
գաղափարախօսութեան դէմ: Դա մի կողմ է  
դէպի լուսաւորութիւն, ինքնաճանաչութիւն  
եւ ինքնագիտակցութիւն: Դա մի նոր դրօշ  
է՝ կրակոտ բնարաններով: «Հիւսիսափայլ»  
յառաջադիմական պայքարի շարունակութիւնն  
է այդ պայքարը: Ահա թէ ինչու Արծրունու  
անունն առանձնայատուկ տեղ է գրաւում հայ  
լրագրութեան եւ հրապարակախօսութեան  
պատմութեան մէջ:

1892 թուականի Դեկտ. 19ին ընկաւ դա-  
րաշրջանի տաղանդաւոր այս հրապարակա-  
խօսը, ընկաւ 20 տարուայ անողք եւ վճռա-  
կան պայքարից յետոյ: Նրա յանկարծակի  
մահը խոր վշտով համակեց հայ հասարակու-  
թեան բոլոր խաւերին: Մօտ 400 ցաւակցա-  
կան հեռագիրներ ստացուեցին ամէն կողմից

— Անդրկովկասից, Ռուսաստանից եւ ար-  
տասահմանից:

Դեկտեմբեր 27ին Թիֆլիսի հասարակու-  
թիւնը կատարեց նրա թաղումը՝ մեծ շքով:  
Նրա դագաղը քաշում էին հօթը դիակառք եւ  
հետեւում մի քանի տասնեակ հազարաւոր  
յուզարկաւորներ:

Ուշից տասը տարի անց, 1902 թ. Դեկ-  
տեմբեր 22ին, կիրակի, նրա մահուան տաա-  
նախակին, հայ հասարակութիւնն իր սի-  
րելի մշակի հողակոյտի վրայ կանգնեցրեց  
մի յուշարձան:

Կանգնած արձանի առաջ համակուած  
ծանր եւ թախիծոտ զգացումներով, դիտում  
եմ տաղանդաւոր հրապարակախօսի վերջին  
կոթողը: Դա միապաղաղ, անարուեստ ժայռի  
մի կտոր է, ինչպէս ինքը, երկաթէ կամքի  
տէք, մարտնչող կրակոտ հրապարակագիրը:  
Ներքեւում հանդէսում է նոյն ժայռից յղկուած,  
մոյգ մարմարոնի նման փայլող հաստ պա-  
տուանդանը, որի հարաւային ճակատին փո-  
րագրուած է.

1845—1892

Այդ յամը թուերը պատմում են ձեզ Ար-  
ծրունու ծննդեան եւ մահուան մասին:

Ժայռի կրծքին, յղկուած փոքրիկ մի  
տարածութեան վրայ, կարդում եմ ոսկեգօծ  
տառերով փորագրուած խմբագրի ստորա-  
գրութիւնը.

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այդ ստորագրութիւնն են կրել նրա այն-  
քան վարպետ գրչով գրուած առաջնորդները,  
որոնք բնորոշ են իրենց պարզ եւ կտրուկ  
վերնագրերով. «Երէկ, այսօր, էգուց», «Ռուֆ  
եւ մեմֆ», «Ո՞ւմն եմք խաբոււմ», «Մեմֆ ձեզ  
կը մերկացնեմք»:

Ի՞նչ է ներկայացնում ապառաժէ կոթողն  
իր կառուցուածքով եւ բովանդակութեամբ:  
Դա 20 տարուայ հերոսական աշխատանքի,  
պայքարի եւ յաղթանակի սինքրօն է: Մա-  
հարձանի նկարը գծագրել է նկարիչ Գէորգ  
Բաշինջաղեանը, որին Արծրունին այսպէս է  
կտակել իր կամքը:

«Ես կ'ուզեի, որ գերեզմանիս վրայ դրած  
լինէր պարզ ժայռի կտոր եւ նրա վրայ կար-  
դացուէր սուկ ազգանունս»:

Եւ ժամանակի ինտէլիգենցիան իրագոր-  
ծեց հրապարակախօսի վերջին կտակը: